

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՕԴԱՆԱՎԻ ԿՇՈՄԱՆ

GUIDANCE ON AIRCRAFT WEIGHTING

ԵՐԵՎԱՆ 2015

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՕԴԱՆԱՎԵՐԻ ԿՇՌՄԱՆ

Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի քաշի և ծանրության կենտրոնի որոշումը իրականացվում է ԻԿԱՕ-ի Doc.9760 “Թռիչքային պիտանիության ձեռնարկ”-ի 7.6 կետի դրույթների համաձայն:

Յուրաքանչյուր օդանավի քաշը պետք է որոշվի մինչև սկզբնական թռիչքային պիտանիության վկայականի վավերացումը՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

- 1) Եթե օդանավի քաշը որոշված է եղել մինչև այն ներկրելը և որի նկատմամբ բոլոր հետագա փոփոխությունները համապատասխանաբար հաշվարկվել և գրանցվել են,
- 2) Օդանավի առավելագույն թռիչքային քաշը չի գերազանցում 5700 կգ, որի դատարկ օդանավի քաշը որոշված է եղել արտադրողի կողմից տրամադրված տեղեկատվության և հաշվարկների հիման վրա,
- 3) Եթե հաշվարկների համաձայն հիմնական քաշը փոփոխվել է առավելագույն թռիչքային քաշից ոչ ավել քան 0.5 % չափով և համաձայն հաշվարկների ծանրության կենտրոնը փոփոխվել է ոչ ավել քան 0.5 % միջին աերոդինամիկական խորդայից (CAX).

Եթե օդանավ շահագործողը իր կազմում ունի օդանավերի քաշի վերահսկման հաստատված կազմակերպություն, ապա ՀՀ ԿԱ ՔԱԳՎ-ն ուսումնասիրում է շահագործողի հայտերը օդանավերի կոնկրետ տիպերի կշռման թույլտվության համար: Այդպիսի կազմակերպությունը պետք է կազմված լինի նվազագույնը երկու ինժեներներից, կամ մեկ ինժեներից և քաշի վերահսկման մեկ մասնագետից կամ քաշի վերահսկման երկու մասնագետներից: ՀՀ ԿԱ ՔԱԳՎ ներկայացվում է հայտ քաշի վերահսկման կազմակերպության հաստատման համար, որում նշվում է մանրամասն տեղեկատվություն անձնակազմի, նրա պատրաստվածության, սարքավորումների, կիրառվող ընթացակարգերի մասին: ՀՀ ԿԱ ՔԱԳՎ պահանջներին համապատասխան հաստատված կազմակերպությունը պետք է գործի, ղեկավարվելով ազգային չափանիշների և կարգերի, ինչպես նաև օդանավ շահագործողի թռիչքային պիտանիության ձեռնարկի պահանջների: Շահագործողի մեկ ինժեները կամ քաշի վերահսկման մասնագետը պետք է ՀՀ ԿԱ ՔԱԳՎ կողմից լիազորված լինի որպես անհրաժեշտ փաստաթղթերի ստորագրման իրավունք ունեցող հաստատված անձ:

Այն դեպքերում, երբ անձնակազմի վերաբերյալ նվազագույն պահանջները գերազանցված են, լրացուցիչ անձը կարող է ՀՀ ԿԱ ՔԱԳՎ կողմից լիազորված լինել գործելու որպես ստորագրման իրավունք ունեցող հաստատված անձ՝ լիազորված անձի բացակայության դեպքում:

Օդանավի քաշի ստույգ որոշման համար օդանավի սեփականատերը կամ շահագործողը պետք է տրամադրի բավարար քանակությամբ անհրաժեշտ անձնակազմ և սարքավորումներ:

ՀՀ ԿԱ ՔԱԳՎ-ն չի կրում պատասխանատվություն օդանավի և չափումներ կատարող անձնակազմի անվտանգության մասով: Եթե բացակայում են ՀՀ ԿԱ ՔԱԳՎ այլ ցուցումներ, ապա անհրաժեշտ է կատարել երկու անկախ չափումներ, որից մեկում օդանավի երկայնական առանցքը պետք է լինի հորիզոնական: Երկու չափումների միջև ժամանակահատվածում չափիչ սարքի վրա ծանրաբեռնվածությունը պետք է լիովին հանվի:

*Ուղեցույց օդանավի կշռման
Guidance on Aircraft weighting*

Երկու չափումների ընթացքում արձանագրված օդանավի առավելագույն քաշի տարբերությունները չպետք է գերազանցեն 0,2% կամ 10 կգ՝ հաշվի առնելով ամենամեծ մեծությունը: Եթե տվյալ պահանջը չի պահպանվում, ապա պետք է շարունակել կատարել չափումներ այնքան ժամանակ, մինչև երկու անկախ չափումների ժամանակ որոշված առավելագույն քաշը չհամապատասխանի տվյալ պահանջին: Չափումների ժամանակ անհրաժեշտ է ապահովել անվտանգության կանոնները, որոնք ընդունված են քաշի որոշման պրակտիկայի և ընթացակարգերի համար:

Չափումների ավարտին անհրաժեշտ է կազմել հաշվետվություն օդանավի քաշի վերաբերյալ և դրա պատճենը, որը վավեր է ճանաչվում չափումների նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձի կողմից, ներկայացվում է ՀՀ ԿԱ ՔԱԳՎ:

Նշում՝ չափումների նկատմամբ ցանկացած կասկածի դեպքում ՀՀ ԿԱ ՔԱԳՎ-ն կարող է պահանջել կարարել կրկնակի չափումներ:

Եթե ՀՀ ԿԱ ՔԱԳՎ այլ ցուցումներ չկան, ապա քաշի հետագա հաշվարկը կատարվում է այն առաջին անգամ որոշելուց հետո՝ յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ: